և 'ի խեցւոյ կրայից (1661)․ որպէս երեւի ցարդ ։ Գնեաց 'ի Յոպպէ զտունս և զտեղիս՝ և հաստատեաց անդ վանս , և զկ մթերանոցս 'ի Բդեշխէն Գաղայու , մերձ 'ի տեղին, յորում եւս առաքեալն Պետրոս զտեսիլ կտաւին կախեալ 'ի չորից տանեաց ․ աստ է մի մասն տան Սիմոնի խաղախորդի , լեալ յառաջագոյն եկեղեցի քրիստոնէից ․ եւ տեղի Մթերանոցացս լեալ է յառաջագոյն գերեզմանատուն Հայոց , որպէս ցուցանեն հին [illegible] , և մի մասն եկեղեցւոյն փոխեալ 'ի մզկիթ յայլազգեաց ․ գնեաց և զայլ տեղիս 'ի կալուած վանաց , եւ զմի քանի տունս յաւանն Ռեմլէ եւ խառնեալ զնոսա ընդ միմեանս արար վանք եւ իջեւանատեղի ուխտաւորաց , և եկեղեցի յանուն Ս․ Գէորգայ զօրավարին , և զայլս 'ի կալուած , և զգերեզմանատունն 'ի վերայ ճանապարհին Յոպպէի ։ Այլ զի մի զայրասցին այլազգիք տեղւոյն ընդ հաստատութիւն վանաց , շինեաց զմիտս նոցա՝ նորոգելով զմզկիթ տեղւոյն , որ յառաջագոյն էր եկեղեցի քրիստոնէից 3 խորանաւ յանուն Ս․ Յովհաննու Կարապետի , եւ սահմանեաց տալ նմա ամ ըստ ամէ իբր իւղագին 17 դահեկան 'ի կալուածոց Ս․ Գէորգայ ։ Շինեաց եւ զեկեղեցի 'ի Գազա յանուն Հրեշտակապետաց ․ այլ յետոյ յանհոգութենէ աւերեալ խանգարեցաւ յԱրաբացւոց , և մի մասն աւերակաց տեղւոյն կայ մնայ անդ ։ Շինեաց զսենեակս միաբանից յարեւմտեան կողմն 'ի վերայ արտաքին մեծի դրան Ս․ Յակոբայ , և կոչեաց զայն Աքէղ-Նող՝ 'ի պէտս բնակութեան վարդապետաց , որոյ յիշատակարանն եդեալ կայ յորմն արեւելեան , և զայլ կարեւոր շինուածս (1663) ։

Դէպ եղեւ 'ի նոյն աւուրս դալ յուխտ յԵրուսաղէմ Խաչատրոյ Կաթուղիկոսին Սսոյ , որում բազում սէր և մեծարանս պատուոյ ցուցեալ Եղիազարու եւ ընդունելութիւն արարեալ յանկոյց յինքն զսիրտ նորա , և յառանձին պահու 'ի մատրան Ս․ Յակոբայ Գլխադրի յայտնեաց նմա զխորհուրդս սրտի իւրոյ , և յաւել ասել՝ թէ 'ի յաջողիլ Կաթուղիկոսութեան իմոյ ոչ հասցէ քեզ բնաւին վնաս ինչ , այլ մանաւանդ յամենայնի ձեռնտու եղեց քեզ ․ կալցի ասէ էջմիածին զիշխանութիւն իւր 'ի վերայ Արեւելեայց և եթ՝ որք կան ընդ տէրութեամբ Պարսից , եւ դու զիշխանու-